

**ՏԱՐԻԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՅՅԵՑԱԿԱՐԳԻ**

*Արմեն Այվազեան**

**Ազգային անվտանգութեան հայեցակարգ
եւ ազգային գաղափարախօսութիւն**

Իւրաքանչիւր պետութիւն ձգտում է յաւերժացնել իր գոյութիւնը, ուստի եւ մշակում ու կիրառում է այս գերագոյն նպատակին համապատասխանող ներքին եւ արտաքին քաղաքականութեան հիմունքներ, որոնք ոչ այլ ինչ են, քան իր ազգային անվտանգութեան հայեցակարգը (Ա.Ա.Հ.): Ա.Ա.Հ.ն ձեւաւորում է երկու ուղղութեամբ. նախ՝ պետութեան բուն գոյութեանը սպառնացող վտանգների ճշտում, յայտնաբերում եւ կանխատեսում, ապա՝ այդ վտանգները կանխարգելող կամ դիմագրաւող միջոցների ծրագրաւորում: Ա.Ա.Հ.ն ընկած է իւրաքանչիւր պետութեան կենսագործունեութեան եւ քաղաքականութեան հիմքում:

Ազգային անվտանգութիւնը¹ կարելի է բաժանել վեց գլխաւոր ոլորտների՝ ռազմավարական, տնտեսական (ֆինանսական, էներգետիկ եւ այլն), տեղեկատուական, ընկերային, ընկերային-հոգեբանական եւ մշակութային: Այս ոլորտների մէջ առաջնայինն ու գլխաւորը ռազմավարական անվտանգութիւնն է, որը ներառում է ռազմական համալիր բնագաւառը՝ զինուած ուժերը, հետախուզութիւնն ու հակահետախուզութիւնը, ռազմական քաղաքականութիւնը եւ յարակից բոլոր տեսակի հարցերը:

Այս առումով անհրաժեշտ է քննել ազգային անվտանգութեան եւ մեզանում անհարկի չարչրկուած «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութիւնների յարաբերակցութիւնը:

Ի՞նչ է իրականում եւ ինչպե՞ս կարելի է բնորոշել ազգային գաղափարախօսութիւնը: Ազգային գաղափարախօսութիւնն անցեալի եւ ներկայի համալիր վերլուծութեան վրայ հիմնուած համազգային նպատակների մի համակարգ է, որը պատմական առանձին ժամանակահատուածում ընդունելի է տուեալ ազգի մեծամասնութեան համար: Երբ այս վերլուծութիւնն ու ազգը միասնական դրօշի տակ համախմբող նպատակները բացակայում են, ճնշող մեծամասնութեան համար ազգային գաղափարախօսութիւնը վերանում է՝ տեղի տալով անձնական երջանկութիւնը ազգայինից դուրս փնտռելու ձգտումներին:

Այսօր Հայաստանի եւ հայ ժողովրդի ազգային գաղափարախօսութեան հիմքում ընկած են հինգ փոխ-կապակցուած բաղադրամասեր,

1. Հայաստանի (ներառեալ Ղարաբաղի) ազգային անվտանգութեան ամրապնդում՝ բոլոր ուղղութիւններով, ուժերով եւ միջոցներով,
2. Հայաստանում օրէնքի ու ընկերային արդարութեան վրայ հիմնուած հասարակութեան կառուցում,
3. Աշխատանքի եւ բարեկեցութեան ապահովում Հայաստանի ժողովրդի համար,

4. Հայկական ինքնօրինակ քաղաքակրթության վերընթաց զարգացում՝ համաշխարհային առաջադեմ փորձի օգտագործմամբ, սակայն սեփական հինգիազարամեայ հոգեւոր եւ մշակութային արժեքների հիմքի վրայ,
5. Հայոց Յեղասպանութեան հետեւանքների աստիճանական վերացմանն ուղղուած ծրագրուած, նպատակասլաց ու հետեւողական գործողութիւններ, որոնք կարող են ձգուել տասնամեակներ:

Հայկական պետութեան համար վերոյիշյալ հինգ դրոյթներից իւրաքանչիւրի պաշտպանութիւնը հիմնարար պահանջ է, որովհետեւ այդ են թելադրում մեր ազգային անվտանգութեան կենսական շահերը:

Թուարկուած հինգ խնդրի շուրջ Հայաստանի ժողովուրդն ու ամբողջ հայութիւնն ունեն ընդհանուր համաձայնութիւն: Սակայն այս համաձայնութիւնը ազգային գաղափարախօսութեան մի երեսն է, կարելի է ասել՝ կրաւորական երեսը: Խնդիրը հասարակութեան կրաւորական համաձայնութիւնը գործունեայ միջամտութեան վերածելն է: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է, որ հնարաւորինս մեծաթիւ հայ անհատներ, բացի համաձայնութիւնից, դրսեւորեն նաեւ քաղաքացիական նուիրումներն ու անձնապէս մասնակցեն նշուած համազգային նպատակների կենսագործմանը: Ահա այս խնդիրը լուծելու համար դեռեւս չունենք խորապէս մշակուած ծրագրեր, այսինքն մեր ազգային գաղափարախօսութիւնը թերի վիճակում է:

Հայաստանի ժողովրդի առողջ եւ կուռ համախմբուածութեանը հասնելու արդիւնաւետ միջոցներից է ազգային գաղափարախօսութեան քարոզումը, որն իր մէջ պետք է ներառնի քաղաքացիական-հայրենասիրական դաստիարակութիւնը եւ Հայաստանի բացառիկ ծանր աշխարհառազմավարական դրութեան ու գայն դիմակայելու միջոցների մասին բաւարար գիտելիքները: Նոյն նպատակներով եւ տարաբնոյթ եղանակներով ազգային գաղափարախօսութիւն են մշակում եւ կիրառում նաեւ հզօրագոյն պետութիւնները՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Զինաստանը, Ռուսաստանը եւ միւսները: Ազգային գաղափարախօսութեան շարունակական կատարելագործումը իւրաքանչիւր հասարակութեան դրական եւ կայուն համախմբուածութեան հասնելու, ասել է թէ՛ ազգային անվտանգութիւնն ամրապնդելու գլխաւոր միջոցներից է: Այսպիսով՝ ազգային անվտանգութեան հայեցակարգը որոշակիօրէն նոյնանում է «ազգային գաղափարախօսութիւն» հասկացութեան հետ:²

Ղարաբաղեան հակամարտութեան պատմական ետնախորքն ու ելութիւնը

Խ.Ս.Յ.Մ. փլուզումից անմիջապէս յետոյ վերաբռնկուեց 1921 թ. սառեցուած հակամարտութիւնը Հայաստանի եւ Ադրբեջանի ու նրա դաշնակից Թուրքիայի միջեւ: 1918-1921 թթ. յետոյ Անկարայի եւ Բաքուի ռազմավարական առաջնահերթ նպատակները Կովկասեան տարածաշրջանում գրեթէ չեն փոխուել: Նրանց շահերը դարձեալ պահանջում են իրենց միջեւ ընկած «հայկական սեպի» վերացում ու Ռուսաստանի ազդեցութեան ոլորտի հետագայ նեղացում: Այդ իսկ պատճառով Թուրքիան եւ Ադրբեջանը փորձեցին կասեցնել Հայաստանի՝ կենսունակ անկախ պետութիւն դառնալու հնարաւորութիւնները: Այս խնդիրը լուծելու համար, ինչպէս եւ 1918-1921 թթ., նախ անհրաժեշտ էր բռնագրաւել Սիւնիքը եւ անմիջական ցամաքային կապ հաստատել Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ: 1990-1992 թթ. Հայաստանի ողնաշարը ջարդելու խնդիրը դիւրին էր թւում. սկզբում պետք էր հայաթափել Ղարաբաղը, որից յետոյ մասնակիօրէն կամ ամբողջապէս բռնագրաւել անպաշտպանունակ մնացած Սիւնիքն ու այդպիսով Հայաստանն ընդմիջտ ենթարկել թուրք-ադրբեջանական թելադրանքին: Արդիւնքում՝ Հայաստանը ենթարկուելու էր փաստացի մասնատման եւ, լաւագոյն դեպքում, որոշ ժամանակ գոյատեւելով որպէս Թուրքիայի խամաճիկ պետութիւն՝ տնտեսապէս ու նաեւ հոգեպէս քայքայուելու եւ աստիճանաբար վերանալու էր աշխարհի երեսից: Խ.Ս.Յ.Մ.

փլուզումից յետոյ այս ծրագիրը թուրքերին եւ ադրբեջանցիներին թուում էր հեշտ իրագործելի, «զինուորական պարահանդեսի» պէս մի բան, քանի որ Հայաստանի եւ Ղարաբաղի սահմաններն անբնական էին եւ խոցելի, գրեթէ ամենուր գծուած այնպէս, որ աշխարհագրական-դիրքային առաւելութիւնը տրուած էր Ադրբեջանին: Մասնաւորաբար՝ ա) Խորհրդային տարիներին ամբողջութեամբ հայաթափութեան ենթարկուելով՝ Նախիջեւանը վերածուել էր Հայաստանի մարմինը ծուատող քաղցկեղային գոյակցութեան ու նաեւ հրաշալի պլացդարմի՝ պատերազմը մինչեւ Հայաստանի սիրտը՝ Արարատեան դաշտ ու քաղաքամայր Երեւան հասցնելու համար, բ) Ղարաբաղում ադրբեջանական ուժերի վերահսկողութեան տակ էին իշխող բարձունքներից շատերն ու ռազմական տեսակետից յոյժ կարեւոր անառիկ Շուշին, գ) Ղարաբաղն ամբողջութեամբ շրջապատուած էր, մեկուսացուած եւ գրեթէ ամբողջովին ենթակայ հրետակոծութեան:

Այս անգամ Հայաստանին մահացու հարուած հասցնելու խնդիրը կատարելու էր Ադրբեջանը, իսկ Թուրքիան մնալու էր վարագոյրի յետեւում՝ խուսափելով Ռուսաստանի հետ բախումից եւ անցանկալի միջազգային բարդութիւններից ու քննադատութիւնից: Սակայն, շնորհիւ Ղարաբաղում եւ Հայաստանում ժամանակին կազմակերպուած պատշաճ ինքնապաշտպանութեան, այս ծրագրերը դատապարտուեցին լիակատար ձախողման:

Ներկայ ռազմավարական իրադրութիւնը

Ղարաբաղեան փայլուն յաղթանակներն ու տարածքային յայտնի առաջխաղացումները եկան ամրապնդելու Հայաստանի (Ներառեալ Ղարաբաղի) ռազմական անվտանգութիւնը: Այս առումով յատկապէս կարեւոր են հետեւեալ չորս հանգամանքները.

ա) Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ տարածքային անմիջական եւ անխափան հաղորդակցութեան գոյութիւնը,
բ) Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ այդպիսի հաղորդակցութեան կատարեալ բացակայութիւնը,
գ) հայկական կողմի վերահսկողութեան տակ գտնուող տարածքների՝ յարաբերական բարձունքում գտնուելը, որ հեշտացնում է ե՛ւ պաշտպանական, ե՛ւ յարձակողական գործողութիւնների հնարաւորութիւնը,
դ) հայկական բանակի՝ յարաբերականօրէն աւելի լաւ կազմակերպուածութիւնն ու բարոյահոգեբանական վիճակը:

Այսպիսով, ներկայ դրութեամբ Հայաստանը Ադրբեջանի նկատմամբ ունի ռազմավարական զգալի առաւելութիւն, որը պէտք է ամէն գնով պահպանել:

Սրանով հանդերձ՝ ներկայումս Հայաստանի ռազմավարական ընդհանուր դրութիւնը մնում է ծանր: Շարունակուում է թուրք-ադրբեջանական շրջափակումը: Ադրբեջանը վերագինում ու վարժեցնում է իր բանակը՝ նոր պատերազմ սկսելու եւ յաղթանակելու յոյսով: Թուրքիան աջակցում է Ադրբեջանին բոլոր բնագաւառներում՝ դիւանագիտական, քարոզչական, տնտեսական, հետախուզական եւ ռազմական: Կանխատեսելի կարճաժամկետ հեռանկարում իրադրութիւնն, ամենայն հաւանականութեամբ, զարգանալու է հետեւեալ իրողութիւնների շուրջ. Ադրբեջանի եւ Թուրքիայի վրայ չկայ եւ չի սպասուում նշանակալից արտաքին (միջազգային) այնպիսի ճնշում, որը կը պարտադրէր նրանց հրաժարուել կամ գոնէ մեղմացնել Հայաստանի եւ Ղարաբաղի հանդէպ որդեգրած անզիջում դիրքորոշումը: Այդ երկու դաշնակից պետութիւնները հետեւողականօրէն շարունակելու են Հայաստանը քայքայել փորձող իրենց այսօրուայ թշնամական քաղաքականութիւնը՝ շրջափակումները, քարոզչական պատերազմը, ռազմական լայնածաւալ պատրաստութիւնները:

Այսպիսի պայմաններում հայկական կողմը, ինչպիսի արտաքին ճնշում էլ գործադրուի, չի դիմելու միակողմանի տարածքային զիջումների, որովհետեւ այդպիսի զիջումները, բարելավելով Ադրբեյջանի (համապատասխանաբար՝ թուլացնելով Հայաստանի) ռազմավարական ընդհանուր վիճակը, միայն կը մեծացնեն պատերազմի հաւանականութիւնը:

Հայաստանը ֆիզիկապէս չի կարող գոյատեւել 29,000 քառ. կմ տարածքում՝ առանց Ղարաբաղեան պատնէշի:

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ռազմավարական սկզբունքները

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ տարուող բանակցութիւններում հայկական կողմի համար անփոփոխ պէտք է լինեն հետեւեալ երեք դիրքորոշումները.

1. Ազատագրուած տարածքները ոչ այլ ինչ են, քան անվտանգութեան երաշխիքներ: Բնականաբար, տարածքային զիջումները յօգուտ Ադրբեյջանի կտրուկ իջեցնելու են հայկական կողմի ռազմավարական անվտանգութեան մակարդակը:

2. Հետեւաբար, եթէ երբեւէ հայկական կողմը զիջում կատարի յօգուտ Ադրբեյջանի, ապա այդ զիջումը պէտք է փոխ-հատուցուի Նոյն անվտանգութեան, այլ ոչ թէ որեւէ ուրիշ (իրաւական, բարոյական, տնտեսական) բնագաւառում. հայկական կողմը Ադրբեյջանից պէտք է ստանայ համարժէք ռազմավարական զիջումներ, ինչպէս նաեւ վերահսկելի եւ ամրակուռ երաշխիքներ:

3. Ղարաբաղեան հարցի լուծման նկատմամբ Հայաստանի որդեգրելիք գլխաւոր սկզբունքը պէտք է լինի հետեւեալ պարզ ձեւակերպումը՝ հակամարտութեան վերջնական կարգաւորումը չպէտք է յանգեցնի Հայաստանի եւ Ղարաբաղի ռազմավարական անվտանգութեան մակարդակի իջեցմանը:

Այսուհանդերձ, միջազգային եւ տարածաշրջանային ներկայ պայմաններում հայկական կողմի տարածքային որեւէ զիջում արդարացուած չի լինի: Չի կարելի մոռանալ, որ Ղարաբաղեան հակամարտութիւնը «երկյարկանի» է. առաջին «յարկում» այն ընթանում է հակամարտութեան անմիջական մասնակիցների (Հայաստանի, Ղարաբաղի, Ադրբեյջանի եւ Թուրքիայի) միջեւ, իսկ «երկրորդ յարկում»՝ տարածաշրջանում մեծ կշիռ ունեցող տերութիւնների (յատկապէս՝ Ռուսաստանի, Ա.Մ.Ն.ի, Իրանի եւ դարձեալ Թուրքիայի) միջեւ: «Առաջին յարկում» ընթացող հակամարտութեան մարումը չափազանց դժուար է լինելու, եթէ «երկրորդ յարկում» հակամարտողները չհասնեն բոլորին ընդունելի մի ինչ-որ համաձայնութեան (modus vivendi): Սակայն արդի զարգացումների եւ, յատկապէս, Կոսովոյի, Չեչնիայի ու նաեւ Աֆղանստանի իրադարձութիւնների վերլուծութիւնը յանգեցնում է սթափեցնող եզրակացութեան, այն է՝ մեծ տերութիւնների բախումն Այսրկովկասում եւ Միջին Ասիայում երկարաձգուելու է՝ բարդացնելով տարածաշրջանի փխրուն կայունութիւնը:

Յաւօք, Սառը պատերազմի աւարտից յետոյ մեզ համար աշխարհը չի դարձել առաւել անվտանգ վայր: Ընդհակառակը, Այսրկովկասն ու Միջին Ասիան այսօր այն տարածաշրջաններն են, ուր ընթանում է մի նոր՝ «փոքր» Սառը պատերազմ³ ու, հետեւաբար, ծիծաղելի է վստահել սեփական անվտանգութեան ապահովումը միմեանց միջեւ կատարի պայքար մղող ուժերի համատեղ խոստացած երաշխիքներին⁴: Այս տարածաշրջանում եւ միջազգային այսպիսի իրադրութեան մէջ Հայաստանին խոստացուող անվտանգութեան երաշխիքները (յամենայն դեպս, այն տեսքով, որով մինչեւ վերջերս դրանք առաջարկուել են եւ բաւականաչափ յայտնի են) կարող են թիրիմացութեան մէջ գցել միամիտ պետական գործիչներին միայն⁵: Չի կարելի վստահել

նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի բարի խոստումներին, մանաւանդ որ այդ երկու դաշնակից պետութիւնները չեն ելլաւորաստում որեւէ լուրջ զիջում կատարել: Ժամանակն է ճիշտ եւ յստակ գնահատել իրականութիւնը: Հայաստանն ակամայ ներքաշուած է իր բուն գոյութեան սպառնացող երկարատեւ հակամարտութեան մէջ: Մենք, ուզենք, թէ չուզենք, դեռ երկար ենք մնալու արտաքին այն իրադրութեան մէջ, որում այժմ ենք: Կանխատեսելի ապագայում ո՛չ Թուրքիայի ու Ադրբեջանի թշնամական քաղաքականութիւնն է փոխուելու, ոչ էլ հայկական զօրքերն են նահանջելու իրենց այսօրուայ դիրքերից: Հէ՛նց այսպիսի անբարենպաստ արտաքին պայմաններում է, որ Հայաստանը պետք է տարիներ, գուցէ եւ տասնամեակներ շարունակ ապրի, զարգանայ ու բարգաւաճի: Այլ ելք մեզ չի տրուած:

Հայաստանի պաշտպանական հայեցակարգը

Որեւէ պետութեան ազգային անվտանգութեան հայեցակարգի առանցքային բաղադրամասը՝ նրա որդեգրած պաշտպանական քաղաքականութիւնն է: Հայաստանում ցայսօր չի մշակուել, մանրագնին վերլուծութեան բովով չի անցկացուել եւ կիրառութեան մէջ չի դրուել երկրի անվտանգութեան պահանջներին համապատասխանող պաշտպանական քաղաքականութիւն: Մեր խորին համոզմամբ՝ 1991-2001 թթ. պետական շինարարութեան բնագաւառում Հայաստանի իշխանութիւնների խոշոր ձախողումները մեծապէս պայմանաւորուած էին երկարաժամկետ սպառնալիքների հաշուառման վրայ հիմնուած ռազմական քաղաքականութիւն չունենալու հանգամանքով: Հայաստանի պաշտպանական հայեցակարգի հիմքում պետք է ընկած լինի անվտանգութեան ապահովումը բոլոր ուղղութիւններով՝ հիւսիսային (վրացական), հարաւային (իրանական), արեւմտեան (թուրքական) եւ արեւելեան ու հարաւ-արեւմտեան (ադրբեջանական ու նախիջեւանեան): Սակայն, այսօրուայ (եւ կանխատեսելի ապագայի) դրութեամբ Իրանն ու Վրաստանը Հայաստանին չեն սպառնում, մինչդեռ ադրբեջանական-թուրքական վտանգն առաւել քան իրական է:

Վրացական եւ իրանական ճակատներ

Այսուհանդերձ, ինչպէս վրացական, այնպէս էլ իրանական ճակատի ամուր պաշտպանութեան ապահովումն անհրաժեշտ է: Նախ՝ թուրքական կամ ադրբեջանական զօրքերը կարող են օգտագործել սահմանային այդ հատուածները (յատկապէս վրացականը) Հայաստան ներխուժելու համար: Բացի այդ, վրացական ճակատում հնարաւոր չէ բացառել, որքան էլ դա անցանկալի է, ինչ-ինչ գործողութիւններ՝ Ջաւախքի հայութեան անվտանգութիւնը պաշտպանելու առումով, իսկ իրանական ճակատում ապագայում կարող են ինդիւրներ առաջանալ թրքախօս բնակչութեան հետ՝ Իրանի կենտրոնական իշխանութեան հանդէպ վերջինիս հնարաւոր ընդվզումների պարագայում:

Ադրբեջանական ճակատ

Հայաստանը պետք է մշտապէս ի զօրու լինի միայնակ ռազմական ջախջախիչ պարտութեան մատնելու Ադրբեջանին: Հայ-ադրբեջանական հաւանական պատերազմում

կամ պատերազմներում երկու հանգամանք քիչ հաւանական է դարձնում Ռուսաստանի ուղղակի միջամտութիւնը յօգուտ Չայաստանի: Նախ՝ Ադրբեջանը եւս Անկախ Պետութիւնների Յամագործակցութեան անդամ է ու, հետեւաբար, այդպիսի միջամտութիւնը վերջնականապէս կը վարկաբեկի Ռուսաստանի համար մեծ նշանակութիւն ունեցող միջ-պետական այս կառոյցը եւ կը քայքայի նրա կենսունակութիւնը: Սակայն աւելի կարելոր հանգամանք է այն, որ Ադրբեջանին դիմակայելու անընդունակ Չայաստանը պարզապէս անարժէք կը լինի Ռուսաստանի համար որպէս ռազմավարական դաշնակից: Չայաստանի տկարանալուն զուգահեռ թուլանալու է նաեւ Ռուսաստանի (ինչպէս նաեւ Իրանի, Յունաստանի եւ մի շարք այլ պետութիւնների) շահագրգռութիւնը՝ սատարելու Չայաստանի զօրութեանն ու անվտանգութեանը: Եւ ճիշտ հակառակը. որքան աւելի ռազմականապէս ամուր լինի Չայաստանը, այնքան աւելի Ռուսաստանն ու այլ բարեկամական պետութիւնները պատրաստ կը լինեն մեզ սատարելու: Տեսնելի ապագայում Չայաստանի ռազմավարական արժէքի որոշիչն ու չափը լինելու է Ադրբեջանին ինքնուրոյնաբար դիմագրաւելու կարողութեան աստիճանը: Ուստի, ադրբեջանական ճակատում Չայաստանն առհասարակ չպետք է յոյս կապի Ռուսաստանի տրամադրելիք օգնութեան հետ: Ասուածը, բնականաբար, չի նշանակում, որ Չայաստանը չպետք է աշխատի Ռուսաստանից այդպիսի օգնութիւն ստանալ:

Թուրքական ճակատ

Այժմ աւելի մանրամասն անդրադառնանք Չայաստանի համար խիստ վտանգաւոր միւս ճակատին: Չայաստանում ազգային անվտանգութեան ոլորտի թերամշակ՝ «խամ ու խոպան» լինելու ամենալուրջ հետեւանքն այն է, որ նոյնիսկ կառավարական մակարդակում բացակայում է պատրաստութիւնը «ամենավատ օրուան»՝ Թուրքիայի հնարաւոր ներխուժմանը: Ճիշտ է, միջազգային արդի դրութեան մի շարք հանգամանքներ առայժմ խիստ նուազեցնում են թուրքական ներխուժման հաւանականութիւնը: Այդ հանգամանքներից են՝

- ա) հայ-ռուսական ռազմական դաշինքի առկայութիւնն ու գործունեութիւնը,
- բ) Թուրքիայի ներքին եւ արտաքին ծանր խնդիրները (տնտեսական ճգնաժամը, քրդական ապստամբութիւնը, Կիպրոսի հիւսիսային մասի շարունակուող բռնազաւթումը, Յունաստանի եւ Սիրիայի հետ խիստ լարուած յարաբերութիւնները, Չայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը եւ այլն),
- գ) Չայաստան ներխուժելու դէպքում Թուրքիան կանգնելու է միջազգային կազմակերպութիւնների եւ մի շարք պետութիւնների դատապարտման ու դիւանագիտական, քաղաքական եւ տնտեսական ճնշումների ենթարկուելու վտանգի առջեւ: Յատկապէս խիստ կը լինեն Ռուսաստանի, Իրանի, Սիրիայի, Յունաստանի, Կիպրոսի, գուցէ նաեւ Ա.Մ.Ն.ի եւ Եւրոպական Միութեան քննադատութիւնն ու հակազդեցութիւնը: Իր դերը կը խաղայ նաեւ Չայկական Սփիւռքը:

Այսպիսով, առայժմ, Թուրքիան հագիւ թէ ընդունի Չայաստան ներխուժելու եւ այդ քայլով մի լրացուցիչ միջազգային գլխացաւանք ստանալու որոշում: Վերոյիշեալ հանգամանքները հաշուի առնելով՝ Չայաստանը քայքայելու եւ կործանելու իր ծրագրերը Թուրքիան մինչեւ այսօր փորձել է իրականացնել ոչ թէ բացայայտ յարձակման դիմելով, այլ Ադրբեջանի ձեռքերով ու շրջափակման միջոցով: Սակայն վերն ասուածից ամենեւին չի հետեւում, թէ Չայաստանի թուրքական ճակատի անվտանգութիւնն այլեւս չպետք է մեզ անհանգստացնի: Թուրքական ներխուժման առջեւ եղած ու վերը նշուած արգելքները բացարձակ ու յաւերժական համարուել չեն կարող: Միջազգային եւ տարածաշրջանային հնարաւոր ինչ-ինչ տեղաշարժերի դէպքում

Թուրքիայի իշխանությունները կարող են նոր հաշուարկներ կատարել եւ եզրակացնել, որ, մի կողմից, Հայաստանի վերջնական ջախջախումն ավելի կարելու է միջազգային անցողիկ դատապարտումից, միւս կողմից՝ Հայաստանի դեմ լայնամասշտաբ կամ «սահմանափակ» յարձակումը ռազմական տեսակետից արագ ու հեշտ իրականանալի ձեռնարկ է լինելու, ինչպիսին էր, օրինակ, 1990 թ. Զուեյթի գաւթումը Իրաքի կողմից: 1990ականների երկրորդ կեսից Թուրքիայի որդեգրած ռազմական նոր հայեցակարգը եւս գալիս է ընդգծելու Հայաստանի համար թուրքական վտանգի իրական լինելը:

Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը

Մինչեւ Խ.Ս.Հ.Մ. փլուզումը Թուրքիայի ռազմական հայեցակարգն ուներ հիմնականում պաշտպանական բնույթ եւ կառուցուած էր սովորական սպառազինություններով պատերազմում ուժերի հաշուարկների վրայ: Միջուկային գէնքի կիրառման հետ կապուած հարցերը վերապահուած էին ՆԱՏՕին կամ Ա.Ս.Ն.ին: Սառը Պատերազմի տարիներին ՆԱՏՕի շրջանակներում բանավեճն այն մասին էր, թէ խորհրդային եւ Վարշաւայի պայմանագրի բանակների յարձակման դեպքում թուրքական զօրքերը որքա՞ն տարածք կը կարողանան պահպանել՝ մինչեւ դաշնակից ուժերն անցնեն հակագրոհի: Թուրք զինուորականները յոյս ունէին հակառակորդին դիմագրաւել սահմանին եւ կազմակերպուած նահանջել: Ամերիկեան ծրագրաւորողները նուազ լաւատես էին. 1950ական թթ. վերջի հաշուարկներով, թուրքերը արագ շարտուելու էին մինչեւ Միջերկրական Ծով՝ Իսկէնդերուլի շրջանը: Թէեւ այս հաշուարկները ժամանակի հետ փոփոխուում էին, 1990 թ. թուրքական գլխաւոր շտաբը երկրի տարածքի բազմաճակատ պաշտպանութիւնը տակաւին համարում էր անվտանգութեան հիմնական խնդիր:⁶ 90ականների առաջին կեսին այս մտայնութիւնը դեռ չէր վերանայուել: 1997 թ. թուրք ռազմական մեկնաբանները, հիմնուելով Ռուսաստանի, Յունաստանի, Իրաքի, Իրանի եւ Սիրիայի՝ կռուի դաշտ սովորական ուժեր հանելու կարողությունների վրայ եւ նրանց վերագրելով տարածքային նկրտումներ, այդ պետությունները համարում էին անվտանգութեան գլխաւոր սպառնալիքներ⁷: Ա.Ս.Ն.ում Թուրքիայի նախկին դեսպան Շ. Էլքըզադը, իր «Երկուսուկէս պատերազմի ռազմավարութիւն» յայտնի յօդուածում մասամբ արտայայտելով ռազմական գերատեսչութեան տեսակետները, ընդգծում էր, որ Թուրքիան պէտք է ծրագրի եւ պատրաստ լինի միաժամանակ խոշորամասշտաբ պատերազմ մղել երկու տարբեր ճակատներով (օրինակ՝ Սիրիայի եւ Յունաստանի դեմ) ու մէկ ներքին պատերազմ՝ քրդական ապստամբութեան դեմ:⁸ Այս հայեցակարգով թուրքական զինուած ուժերը պէտք է կազմակերպուէին, մարզուէին եւ սպառազինուէին՝ երկու գլխաւոր խնդիր լուծելու համար. Ա.) Թուրքիայի ցամաքային եւ օդային ուժերը պէտք է կարողանային կասեցնել զրահատանկային հուժկու ներխուժումներն արեւելքից (Խ.Ս.Հ.Մ./Ռուսաստան) ու հարաւից (Սիրիա, Իրաք), ապա՝ անցնէին խոր էշելոնային պաշտպանութեան: Բ.) բանակը եւ ներքին զօրքերը (ժանդարմերիան) պէտք է պատրաստ լինէին վարելու հակապարտիզանական պատերազմ՝ յենուելով ամրացուած շրջանների եւ արագ արձագանքման շարժուն ուժերի վրայ: Նաւատորմին վերապահուած էր Բոսֆորի նեղուցի հսկողութիւնը: Այսպիսով, զինուած ուժերից պահանջուում էր մարտավարական շարժունութիւն, մինչդեռ ռազմավարական շարժունութիւնը եւ թշնամու խորքը հարուածելու կարողութիւնը պակաս կարելու էին համարուում, քանզի ակնկալուում էր, որ պատերազմն ընթանալու է Թուրքիայի տարածքում:⁹

Մինչեւ վերջերս Թուրքիայի զինուորականութիւնը թոյլ չէր տալիս նահանջ Զեմալ Աթաթուրքի այն տեսակետից, ըստ որի, Թուրքիայի ճակատագիրը կապուած է միմիայն Արեւմուտքի հետ, գնահատելով մահմեդական արեւելքում ազդեցութիւնը մեծացնելու

փորձերը իբրեւ իսլամականների յետադիմական ձգտումներ, որոնք կարող են վտանգել երկրի արեւմտամետ ուղին: Սակայն 1999 թ. սկզբին Պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակեց «Սպիտակ տետրակ. պաշտպանութիւն» պաշտօնական տեղեկագիրքը, որում, շեղուելով արտաքին քաղաքականութեան եօթանասնամեայ աւանդոյթից, Թուրքիան դիտում է արդէն իբրեւ «Եւրասիական երկիր», որը «պարտաւոր է պահպանել ու ընդլայնել կապերը ԵՒ Արեւմուտքի, ԵՒ Արեւելքի հետ»¹⁰: Տեղեկագիրքը շարադրում է նաեւ Թուրքիայի ռազմական քաղաքականութեան չորս հիմնական պաշտօնական սկզբունքները.

1) Չսպում (deterrence). ռազմական այնպիսի ուժի պահպանում, որն ի վիճակի կը լինի զսպիչ ազդեցութիւն ունենալ արտաքին եւ ներքին սպառնալիքներ յարուցողների դէմ.

2) Կոլտէկտիւ անվտանգութիւն. գործուն մասնակցութիւն միջազգային եւ տարածաշրջանային դաշինքների եւ կազմակերպութիւնների աշխատանքներին, յատկապէս՝ ՆԱՏՕի եւ Արեւմտաեւրոպական միութեան շրջանակներում.

3) Առաջ մղուած պաշտպանութիւն (forward defense). հնարաւոր զաւթողականութեան (ագրեսիայի) բովանդակութիւնն առաւել վաղ յայտնաբերելու եւ կանխելու կարողութիւն.¹¹

4) Հակամարտութիւններին միջամտելու եւ խաղաղարարական գործողութիւններին մասնակցելու կարողութիւն:

Այս դրոյթներին պետք է աւելացնել նաեւ Թուրքիայի գլխաւոր շտաբի պետ Հուսէյին Կիվրիկօղլուի՝ «առաջ մղուած ճակատամարտի» (forward engagement) դրոյթը, ըստ որի, զինուած ուժերը պետք է պատրաստ լինեն կանխելու Թուրքիայի շահերի դէմ եղած սպառնալիքները, մինչեւ դրանց Թուրքիայի սահմաններից ներս թափանցելը¹²:

Կիվրիկօղլուի միտքը պարզաբանուած է «Սպիտակ գրքում».

«2000ական թթ. ընդհանուր հայեցակարգով պահանջում է վերահսկելի դարձնել այն շրջանը, որտեղ գտնուում է յարձակողը եւ նրան պարտութեան մատնել իր խոր թիկունքում ու ռազմադաշտի մատոյցներում: Այդ նպատակին հասնելու համար կարելու է գերակշիռ կրակային ուժով եւ խուսանաւելու կարողութիւններով զօրքեր ունենալը, յարձակողի ամենաթոյլ տեղի ճշտումը, նշանակետերի ճանաչումն ու յայտնաբերումը, նախագզուշացման համակարգերի, զօրքերի ղեկավարման, Էլէկտրոնային պատերազմի եւ կապի ու տեղեկատուական համակարգերի համադրուած եւ արդիւնաւետ կիրառումը»:¹³

Այսպիսով, անգամ պաշտօնական փաստաթղթերում թուրքական հրամանատարութիւնը ծրագրում է ապագայ պատերազմները մղել Թուրքիայի սահմաններից դուրս: Ա.Մ.Ն.

բանակի «Փարամիթըրզ» հեղինակաւոր հանդէսում վերլուծելով այս նիւթերը՝ Նոյն եզրակացութեանն է յանգում թուրքական զինուորականութեան հարցերով մասնագիտացած մի հեղինակ. «Անկարան ընդունել է գործողութիւնների այնպիսի մի հայեցակարգ, որով զինուորականութիւնը ձգտելու է վերացնել Թուրքիայի դէմ սպառնալիքները նրա ինքնիշխան տարածքից դուրս: Թուրքական զինուած ուժերը ոչ միայն ընդունակ են, այլեւ ցանկանում են գործել իրենց սահմաններից դուրս»:¹⁴

Այս նպատակին են ուղղուած նաեւ թուրքական զինուած ուժերի վերագինման չափազանց յաւակնոտ ծրագրերը¹⁵: Դեռեւս 1998 թ. Օգոստոսին, մինչեւ գլխաւոր շտաբի պետ նշանակուելը, Թուրքիայի ցամաքային զօրքերի հրամանատար, գեներալ Կիվրիկօղլուն, շեշտելով, որ «զօրքերի արագ ծաւալումը հեռաւոր շրջաններում կենսական նշանակութիւն ունի այն ռիսկերի եւ պատասխանատուութիւնների համար, որ մենք հնարաւոր է՝ ստանձնենք», այնուհետեւ շարադրեց արդիականացման մի ծրագիր, որը Թուրքիային պետք է ընձեռեր համատեղ գործողութիւնների ռազմավարական շարժունութիւն եւ երկրի սահմաններից դուրս հարուած հասցնելու կարողութիւն¹⁶: Այդ ծրագրի իրականացումը, գեներալ Կիվրիկօղլուի հաւաստմամբ, կը բերի նրան, որ թուրքական բանակը կ'ունենայ «այնպիսի գէներալի համակարգեր, որոնք առաւելութիւն կը հաստատեն թշնամու վրայ՝ նրա տարածքի խոր թիկունքում, կը կիրառեն «խելացի» զինամթերք, ներառեալ «երկիր-երկիր» հեռահար հրթիռներ, ապահովելով կրակակետերի

շարունակական եւ լուրջ քողարկումը: [Բանակը նաեւ կ'ունենայ] նորագոյն գրահով պատուած արդիական տանկեր ու արդիւնաւետ հակատանկային զէնքերի համակարգեր, դրանց կից հակօդային պաշտպանութեան միջոցներ, ինչպէս նաեւ դեսանտային զօրքերը տեղափոխող ուղղաթիւներ... Տեղեկատուութեան հաւաքման համակարգերը հնարաւորութիւն կը տան ստորաբաժանումներին բոլոր մակարդակներում յայտնաբերել, ճշտորոշել եւ ճանաչել թշնամուն իրենց կարողութեան շառաւիղի մէջ»¹⁷

Ի մի բերենք: Թուրքիայի ռազմավարական մտածողութիւնն այնպիսի վերափոխութիւն է ապրել, որ անգամ թուրք եւ ամերիկացի վերլուծաբանները խօսում են «նոր օսմանեան օրակարգի» հաստատման մասին¹⁸: Կենտրոնական Ասիայից մինչեւ Բալկաններ գերիշխան դեր ստանձնելու իր նոր օսմանեան դիրքորոշումներով Թուրքիան առաւել վտանգաւոր է դարձել իր հարեւանների եւ առաւել անկանխատեսելի՝ իր դաշնակիցների համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

*) Զեդինակը պատմական գիտութիւններու թեկնածու է եւ միջազգային յարաբերութիւններու մասնագետ: 1992-1994 աշխատած է Զ.Յ. Նախագահի եւ Զ.Յ. արտգործնախարարութեան կառոյցներու մէջ. եղած է Զ.Յ. Ներկայացուցիչը Ե.Ա.Յ.Խ.ի մօտ, մասնակցած է Մինսկի խումբի բանակցութիւններուն: Այժմ Մաշտոցեան Մատենադարանի աւագ գիտաշխատող է եւ կը դասախոսէ Զ.Յ. Ամերիկեան Զամալսարանի մէջ: Ունի վեց մենագրութիւն եւ շուրջ 30 գիտական յօդուած:

1.- Ազգային բաղադրութեամբ միատարր Զայաստանի պարագայում ազգային եւ պետական անվտանգութիւն հասկացութիւնները համընկնում են: Մենք նախընտրում ենք գործածել ազգային անվտանգութիւն եզրը (հետեւելով անգլերէն կամ ֆրանսերէն national security-se'curite' national գործածութեան, ուր national եզրը միաւորում է երկու իմաստ՝ ե՛ւ ազգային, ե՛ւ պետական):

2.- Վերջերս լոյս է տեսել ազգային գաղափարախօսութեան եութիւնն ու բովանդակութիւնը քննութեան առարկայ դարձրած երկու ուշագրաւ աշխատութիւն. Լենդրուշ Խուրշուդեան, «Զայոց ազգային գաղափարախօսութիւն», Երեւան, 1999: Ալբերտ Նալչաջեան, «Ազգային գաղափարախօսութիւն եւ էթնօ-հոգեբանութիւն», Երեւան, «Յոգեբան», 1999 (ռուս.):

3.- Արեւմտեան ու նաեւ մերձաւոր-արեւելեան մեկնաբաններն արդէն նկատել են, որ Ռուսաստանի եւ Ա.Մ.Ն.ի՝ վարագոյրների յետեւում ընթացող աշխարհաքաղաքական մենամարտերը տակաւին չեն դադարել Նոյնիսկ Աֆղանստանում թալիբների դեմ համատեղ հանդէս գալուց յետոյ (James Ridgeway, «The New Cold War», Yahoo! News Story, December 14, 2001 04:48 PM EST. Վեաչեսլաւ Նիկոնով, «Մենք՝ քաղաքակրթութեան ուժերի հետ», «Գրաժանիկ» («Քաղաքացի» - քաղաքական ամսաթերթ), թիւ 1, Դեկտեմբեր, 2001, էջ 4 (ռուս.): Իրանի ռադիոյի տեսութիւնը. տե՛ս «Մոսկուա-Վաշինգտոն ջերմ յարաբերութիւնները խօսքից այն կողմ չեն անցնի», «Ազգ», 21 Դեկտեմբերի 2001 թ.): Աֆղանստանում պատերազմական գործողութիւնների աւարտից յետոյ Ա.Մ.Ն.ը վերսկսեց Չեչնիայի հարցում Մոսկուայի քննադատութիւնը, ինչպէս նաեւ չեչնիների հետ կապերը, դրդելով Ռուսաստանի արտգործնախարարութեանը հանդէս գալ յայտարարութեամբ, որում մասնաւորապէս ասուում է. «հարցն այն է, թէ արդեօ՞ք ամերիկեան կողմը դեռեւս շղթայուած է հին մտապատճեններով եւ շարունակում է բաժանել ահաբեկիչներին «լաւերի» եւ «վատերի».- Ron Popeski, «Russia Chides U.S. Over Chechen Contacts», Reuters World-News, January 24, 2002 4:48 PM ET: Իսկ Ա.Մ. Ն.ում շատ ազդեցիկ ուժեր շարունակում են կասկածանքով վերաբերել Ռուսաստանի հետ աւելի սերտ ռազմավարական համագործակցութեանը, մասնաւորապէս, Ռուսաստան-ՆԱՏՕ որոշումներ ընդունող նոր՝ 1+19 առաջարկուած ֆորմատին՝ պնդելով, որ այդ դեպքում ՆԱՏՕն կը նմանուի Ե.Ա.Յ.Կ.ի պէս դանդաղաշարժ

եւ դիւանակալական կազմակերպութեան (տե՛ս, օրինակ, Helle Dale, «Yesterday's alliance?» The Washington Times, January 30, 2002): Տե՛ս նաեւ Uri Avnery, «Oil, Sharon and the Axis of Evil: The Great Game», Counter Punch (www.counterpunch.com) February 11, 2002 (posted in Turkistan Newsletter, 12 Feb 2002; (լոյս է տեսել նաեւ իսրայելական օրաթերթ Ma'ariv-ում, Feb 08, 2002):

4.- Մեր ուսումնասիրութիւններից մէկում ներկայացրել էինք Ղարաբաղեան հակամարտութեան մեր մշակած փոխ-զիջումային լուծման մի կոր ծրագիր, որն, ի թիւս այլ առաջարկութիւնների, նախատեսում էր ներգրաւել Ա.Ս.Ն.ին հայ-ռուսական պաշտպանական դաշինքի մէջ (տե՛ս Արմէն Այվազեան, «Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը եւ Հայաստանի ռազմավարական անվտանգութիւնը», Երեւան, Հայաստան, Հայինֆօ, 1998, էջ 60-78. Ռուսաստան-ՆԱՏՕ ռազմաքաղաքական դաշինքի հնարաւորութիւնների մասին տե՛ս նոյն տեղում, էջ 69-72): Այս միջոցառմամբ, մեր կարծիքով, հնարաւոր կը լինէր չզիջել եւ, ընդհակառակը, է՛լ աւելի ամրապնդել Հայաստանի (ներառեալ Ղարաբաղի) ռազմավարական անվտանգութեան մակարդակը՝ Ադրբեյջանին ազատագրուած որոշ տարածքների յանձնումից յետոյ: Սակայն առայժմ այս փոխ-զիջումային ծրագրի կիրառման հաւանականութիւնը շատ փոքր է, քանի որ մի կողմից՝ Ռուսաստանի եւ Ա.Ս.Ն.ի՝ վարագոյրների յետեւում, իսկ երբեմն էլ բացայայտ ընթացող աշխարհաքաղաքական մենամարտերը տակաւին չեն դադարել: Միւս կողմից անհրաժեշտ է նաեւ Ադրբեյջանի եւ Թուրքիայի անհաշտ դիրքորոշման փոփոխութիւն: Մի բան, որ դեռեւս իսպառ բացակայում է: Այս լուծման առջեւ կանգնած են նաեւ ամերիկեան եւ ռուսական ներքին քաղաքականութեան ոլորտին վերաբերող արգելքները. Ա.Ս.Ն.ում բնակչութեան եւ օրէնսդիրների շրջանում դեռեւս ազդեցութիւն ունեն վտանգաւոր տարածաշրջաններում չխառնուելու աւանդական տրամադրութիւնները, մինչդեռ Ռուսաստանում որոշ ընդդիմադիր ուժեր կարող են շահարկել հայ-ռուս-ամերիկեան ռազմաքաղաքական դաշինքը՝ մեկնաբանելով այն որպէս Ռուսաստանի նահանջ իր աւանդական ազդեցութեան ոլորտներից: Այս ամէնով հանդերձ, կարծում ենք, վերոյիշեալ առաջարկութիւնները պետք է պահել «ջրի երեսին»: Այդ ծրագիրը կարող է տարբեր բարելաւումներով կիրառուել այն ժամանակ, երբ ամերիկեան-ռուսական ռազմավարական համագործակցութիւնն իրականութիւն դառնայ: Սակայն այդ օրուայ յոյսին մնալը եւս անթոյլատրելի է, այն կարող է շատ ուշանալ: Ընդհանուր առմամբ, առայժմ անհաւանական է փոխ-զիջումային այնպիսի մի ծրագրի կիրառում, որը նախատեսում է հայկական զօրքերի դուրսբերում Արցախի եւ Սիւնիքի շուրջն ստեղծուած անվտանգութեան գոտուց (այս մասին տե՛ս Armen Aivazian, «Possible Solutions for the Nagorno-Karabagh Problem: A Strategic Perspective», in Levon Chorbajian, ed., Making a State: From Secession to Republic in Nagorno-Karabagh. New York: St. Martin's Press, 2001, pp. 233-234):

5.- Լուրջ քննադատութեան չեն դիմանում յատկապէս այնպիսի վճռորոշ «դետալներ», ինչպիսիք են, օրինակ, Ե.Ա.Հ.Կ. ծրագրած Ղարաբաղեան խաղաղապահ ուժերի՝ տարածաշրջանում մնալու կարճատեւութիւնը, այդ ուժերի փոքրաթիւութիւնն ու մանդատով որոշուած կրաւորականութիւնը, դրանց հրամանատարութեան ոչ-յստակ եւ ապակենտրոնացուած կառոյցը եւ այլ կարեւոր հարցեր: Ե.Ա.Հ.Կ.Մինսկի խմբի ծրագրի ռազմավարական եւ զուտ ռազմական լուծումների ծրագրային-կառուցուածքային թերութիւնների մասին առաւել մանրամասն տե՛ս Արմէն Այվազեան, «Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը եւ Հայաստանի ռազմավարական անվտանգութիւնը», էջ 37-59: Լսելով նոյն քննադատութիւնս՝ 1998 թ. Մարտին Միացեալ Նահանգների Խաղաղութեան Հիմնարկի (որ, փաստօրէն, Ա.Ս.Ն. Պետքարտուղարութեան գիտահետազօտական մասն է) կազմակերպած Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցերին նուիրած Կլոր Սեղանին՝ ամերիկացի դիւանագետներն ստիպուած էին դժկամութեամբ խոստովանել Մինսկի խմբի ծրագրի նախատեսած անվտանգութեան երաշխիքների խիստ անբաւարար լինելը: Նրանց այս խոստովանութիւնը իր տեղն է գտել նաեւ այդ Կլոր Սեղանի արդիւնքներով

- հրապարակուած գրքի «Եզրակացութիւններ» բաժնի առաջին իսկ նախադասութեան մէջ, տե՛ս Nagorno-Karabagh: Searching For A Solution, A United States Institute of Peace Roundtable Report. Peaceworks No. 25. First published December 1998: Այս գիրքը հրապարակուած է նաեւ ինտերնետում հետեւեալ հասցեով՝ <http://www.usip.org/pubs/pworks/pwks25>. Իսկ բոլորովին վերջերս՝ 2001 թ. Նոյեմբերին Ֆրանսիացի եւ ամերիկացի համանախագահները յայտարարեցին, որ խաղաղարար ուժերի տեղակայումն անգամ որոշուած չէ, եւ իրենք դեռ տեխնիկական բնոյթի այդ հարցերի մէջ շատ չեն խորացել, այլ աշխատում են քաղաքական մեծ պայմանագրի վրայ: Այնինչ, Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման համար նմանատիպ տեխնիկական բնոյթի համարուող հարցերն ունեն ճիշտ նոյն նշանակութիւնը, ինչ, ասենք, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը. - տե՛ս «Կարգաւորումը մօտ ապագայի ինդիք չէ (Հարցազրոյց պատմաբան-քաղաքագետ Արմէն Այվազեանի հետ)».- «Հայոց Աշխարհ», 20 Նոյեմբերի, 2001):
- 6.- Michael Robert Hickok, «Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization», Parameters (US Army War College Quarterly), Summer 2000, Vol XXX, No. 2, p. 105-119 (ստորեւ, սակայն, այս յօդուածի էջերը նշում ենք այնպէս, ինչպէս այն յայտնուում է ինտերնետում):
- 7.- Malik Mufti, «Daring and Caution in Turkish Foreign Policy», Middle East Journal, 52 (Winter 1998), pp. 34-40:
- 8.- Shukru Elekdag, 2 and 1/2 War Strategy, Perceptions: Journal of International Affairs, No. 1 (March-May 1996), pp. 33-57:
- 9.- Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, p. 3:
- 10.- Ministry of National Defense (Turkey), White Paper-Defense 1998 (Ankara: Ministry of National Defense), 1998, p. 5:
- 11.- Ministry of National Defense (Turkey), White Paper-Defense 1998, p. 16:
- 12.- Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, p. 4: Մէջբերումը կատարուած է թուրքական հետեւեալ պարբերականից՝ Ulusal Strateji («Միջազգային ռազմավարութիւն») (March-April 1999), pp. 68-73:
- 13.- Ministry of National Defense (Turkey), White Paper-Defense 1998, p. 19:
- 14.- Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, p. 4:
- 15.- Այս ծրագրի մասին տե՛ս Ministry of National Defense (Turkey), White Paper-Defense 1998, p. 117-139. Vahit Erdem, «Defense Industry and Investment Projects», Turkish Review Quarterly Digest (Spring 1988), p. 18. Michael Robert Hickok, «Peace Onyx: A Story of Turkish F-16 Coproduction», in International Military Aerospace Collaboration, ed. Pia Christina Wood and David S. Sorenson (Aldershot, U.K.: Ashgate Press, 1999), pp. 153-181. Idem, «Hegemon Rising», pp. 5-9: Sorenson (Aldershot, U.K.: Ashgate Press, 1999), pp. 153-181. Idem, «Hegemon Rising», pp. 5-9:
- 16.- Huseyin Kivrikoglu, «Land Forces Organization», Ankara Savunma ve Havacilik [Անկարայի պաշտպանութիւն եւ հաւօդային պաշտպանութիւն] (September-October 1998), pp. 10-11:
- 17.- Huseyin Kivrikoglu, «Land Forces Organization», p. 18:
- 18.- Ola Tunander, «A New Ottoman Empire? The Choice for Turkey: Euro-Asian Centre vs National Fortress», Security Dialogue, 26 (December 1995), 413-26. Hickok, «Hegemon Rising», p. 9-10: